ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 17-Ի N 2-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Որոշման նախագիծը մշակվել է ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ , 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետերի պահանջներով:

Գավառ համայնքի 2025 թվականի բյուջեում կատարվող փոփոխությունները պայմանավորված են

Ծախսային մասում

1. 09 բաժնի 1 խմբի 1 դասի /Նախադպրոցական կրթություն/ գործառնական դասակարգման 5113 /շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում/ տնտեսագիտական հոդվածը պակասեցնել 13,500.000 ՀՀ դրամով, որն ավելացնել 06 բաժնի 4 խմբի 1 դասի /փողոցների լուսավորում/ գործառնական դասակարգման 5112 /շենքերի և շինությունների կառուցում/ տնտեսագիտական հոդվածին Գավառ համայնքում փողոցային լուսավորության ցանցի կառուցման աշխատանքների իրականացման համար
2. 10 բաժնի 7 խմբի 1 դասի /Սոցիալական հատուկ արտոնություններ/ գործառնական դասակարգման 4729 /Այլ նպաստներ բյուջեից/ տնտեսագիտական հոդվածով պլանավորված 12,000.000 ՀՀ դրամը պակասեցնել 800.000 ՀՀ դրամով, որն ավելացնել նույն գործառնական դասակարգման 4269 /Հատուկ նպատակային այլ նյութեր/ տնտեսագիտական հոդվածին Գավառ համայնքում մեղվաբուծությունը զարգացնելու համայնքային սոցիալական ծրագրի շրջանակներում շահառուներին համապատասխան նյութերով ապահովելու նպատակով